ԹԱՌԱԹՈՒՄԲ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Վահանիկ Մարկոսյան
Հեռախոս՝ +374.77.604908

Թառաթումբ գյուղը գտնվում է Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում, Վարդենիսի լեռնաշղթայի հարավային լանջերին, ծովի մակերևույթից 1640մ բարձրության վրա, Եղեգնաձոր քաղաքից 22 կմ հյուսիս-արևմուտք, Երևան քաղաքից 140 կմ հեռավորությամբ: Սահմանակից է Հորս, Սալլի, Քարագլուխ, Աղնջաձոր գյուղերին, արևմուտքից սահմանակից է Մարտունու տարածքին: Կլիման տաք է և չոր՝շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով, տարեկան տեղումների քանակը կազմում է 400-450մմ: Բնական լանդշտաֆները տափաստանային են:

Գյուղը պատմության մեջ հիշատակվել է նաև Թառաթուն անվանումով: Այն գոյություն է ունեցել և բավականին ծաղկուն բնակավայր է համավել դեռևս XII-XIII դարերում, որի մասին են վկայում գյուղի շրջակայքում գտնվող պատմամշակութային հուշարձանները:
Ներկայիս Թառաթումբ գյուղը հիմնադրվել 1830 թվականին ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո՝ Պարսկահայաստանի Խոյ գավառի Ղորուղ գյուղից գաղթած 10 ընտանիքների կողմից:

Գյուղը տվել է Հայրենական մեծ պատերազմի և Սոցիալիստական աշխատանքի մեկական հերոսներ:

Գյուղն ունի 1896 թվականին հիմնովին վերանորոգված գործող եկեղեցի: Այն 1895 թվականին հիշատակվում էր Սուրբ Աստվածածին անվամբ, իսկ արդեն 1925 թվականին հիշատակվել է Սուրբ Հովհաննես անվամբ: Այս անվանափոխությունից հետևում է, որ այդ տարիների ընթացքում եկեղեցում տեղի էին ունեցել լուրջ նորոգություններ, որից հետո եկեղեցին վերաօծվել և վերանվանվել է, որի մասին վկայում է եկեղեցու մուտքի բարավորին փորագրված երկտող արձանագրությունը:
Գյուղի տարածքում կան շատ խաչքարեր, եկեղեցու ավերակներ, որոնք վկայում են, որ տարածքը բնակեցված է եղել դեռևս հին դարերում:
Գյուղն ունի միջնակարգ դպրոց, նորակառուց համայնքային կենտրոն, որտեղ տեղակայված են գրադարանը, մշակութի տունը, բնակավայրի վարչական կենտրոնը, բուժկետը և խաղասենյակ:

Բնակչությունն զբաղվում է այգեգործությամբ (հիմնականում՝ խնձոր և ընկույզ), կարտոֆիլի մշակությամբ, մեղվաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղում գործում է քարի մշակման արտադրամաս:

2002 թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Թառաթումբ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է ընդամենը 9 հուշարձան: